ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Վ11ԱԴ -ՄԱԾՄ-2021 /6

ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ք.Վանաձոր 04.10.2021թ.

ՀՀ ԿԳՄՆ <<Վանաձորի Գրիբոյեդովի անվան N 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ (այսուհետ՝ «Կազմակերպություն»), ի դեմս Կազմակերպության տնօրեն Նարինե Սահակյանի, գործող Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից և ,,ՄԱՐ-ՄՈՍ,, ՍՊԸ-ն, ի դեմս Ա.Մակարյանի (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1.Սույն պայմանագրով կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել սույն պայմանագրի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունները /տարածքի գնահատում/ (այսուհետ «Ծառայություններ»), գնի առաջարկով սահմանված գներով, քանակով և սահմանված այլ պայմաններով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունները և վճարել դրանց դիմաց:

1.2.Մատուցվելիք Ծառայությունների ժամանակահատվածը նշվում է Հավելված N2-ում

1.3.Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի և Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման վերաբերյալ հանձման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի փաստը ֆիքսելու ակտը ստորագրելու պահից:

2.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. *Կատարողը պարտավոր է՝*

2.1.1.Ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

2.1.2.Ծառայությունները մատուցել սույն Պայմանագրի Հավելվածում նշված ժամանակահատվածում և ամբողջ ծավալով,

2.1.3.Ծառայությունների մատուցումն ավարտելուց հետո, 10 (տասը) աշխատանքային օրյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել Ծառայությունների իրականացման հետ կապված անհրաժեշտ բոլոր հաշվետվություն-ները,

2.1.4.Հաշվետվությունների վերաբերյալ Պատվիրատուի գրավոր առարկությունները ստանալուց հետո ոչ ուշ, քան 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները, ինչի մասի գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.2. *Կատարողն իրավունք ունի՝*

2.2.1.Ինքնուրույն և ազատ իրականացնել իր գործողությունները՝ չչեղվելով սույն պայմանագրով իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարման սահմաններից և շրջանակներից,

2.2.2.Մատուցված ծառայության համար ստանալ սույն Պայմանագրով նախատեսված վարձատրությունը

2.3. *Պատվիրատուն պարտավոր է՝*

2.3.1.Ծառայությունների դիմաց վճարել սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով և սույն Պայմանագրի Հավելվածում նշված ժամկետներում ու գնին համապատասխան,

2.3.2.Որևէ կերպ չխոչընդոտել կատարողի Ծառայության մատուցմանն ուղղված գործողություններին,

2.4. *Պատվիրատուն իրավունք ունի՝*

կամ կանխարգելել: Սույն պայմանագրի համաձայն` Կողմերը Ֆորս-Մաժորային իրավիճակներ են համարում հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավիճակները:

6.2.Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով պայմանագրային պարտավորությունները չկատարող Կողմը պարտավոր է ողջամիտ ժամկետում մյուս Կողմին գրավոր տեղյակ պահել անհաղթահարելի ուժի ազդեցության վերացման մասին:

7.Եզրափակիչ դրույթներ

7.1.Սույն պայմանագրի գործողության ժամկետն է` 04.10.2021-31.10.2021թ մինչև Կողմերը կատարեն վերջինով ստանձնած պարտականությունները,

7.2.Պայմանգրի պայմանները կարող են փոփոխվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր կարգով,

7.3.Սույն պայմանգիրը կնքված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.Կողմերի իրավաբանական հասցեները

Պատվիրատու

ՀՀ ԿԳՄՍՆ «Վանաձորի Գրիբոյեդովի անվան

N 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ք.Վանաձոր, Ազատամարտիկների պուրակ 1,

Կենտրոնական գանձապետարան

հ/հ900238000534

ՀՎՀՀ 06909818

տնօրեն Ն.Սահակյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կատարող

,,ՄԱՐ-ՄՈՍ,, ՍՊԸ

հասցե-ք.Վանաձոր,Մ.Գորկի 7

հ/հ 2479121197050000

Արդշինբանկ Լոռի մ/ճ

ՀՎՀՀ 06934168

տնօրեն Վ.Մակարյան

(ստորագրություն)

Կ.Տ.